

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՁԵՎ 5)**

**Ծանոթագրություն 1 1. Իրավական դաշտ**

**ա. Իրավական դաշտ**

ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ՝ Ապահովագրական Փակ Բաժնետիրական Ընկերությունը ձևավորվել է «Էֆես» Ապահովագրական Փակ Բաժնետիրական Ընկերության անվանափոխության միջոցով: Ընկերությունը գրանցվել է պետական ռեգիստրում 22.09.1997թ. և ստացել Փակ Բաժնետիրական Ընկերության կարգավիճակ:

ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի 28.03.2008թ թիվ 97 Ա որոշմամբ Ընկերությունը վերագրանցվել է և Ընկերությանը տրամադրվել են ոչ կյանքի ապահովագրության և վերապահովագրության լիցենզիաներ:

Ընկերությունը գործում է Հայաստանի Հանրապետությունում մայրաքաղաք Երևանում տեղակայված գրասենյակում՝ Տպագրիչների 8 հասցեում:

Ընկերության բաժնետոմսերի 75 %-ը պատկանում է «Ինվեստ-Պոլիս» ՍՊԸ-ին (Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա, Լեսնայա փողոց, 41 շենք), և 25 %-ը Լևոն Ալթունյանին (Հայաստանի Հանրապետություն, Երևան, Եզնիկ Կողբացու 53, բն. 12)

Ընկերության գործունեության հիմնական նպատակն է աջակցել տնտեսության զարգացման գործընթացին Հայաստանի Հանրապետությունում լավագույն միջազգային չափանիշներին համապատասխանող ապահովագրական ծառայություններ մատուցելու միջոցով:

Ընկերությունը իր գործունեության մեջ անկախ է օրենսդիր և գործադիր մարմիններից և ղեկավարվում է ՀՀ անանադրությամբ, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, այլ նորմատիվ ակտերով, ՀՀ կենտրոնական բանկի որոշումներով և ընկերության կանոնադրությամբ:

Ընկերության աշխատողների թվաքանակը 2009թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 27 մարդ:

**բ. Կորպորատիվ կառավարում**

Համաձայն ՀՀ օրենսդրության, Կենտրոնական բանկի նորմատիվ ակտերի և կանոնադրության Ընկերության կորպորատիվ կառավարումն իրականացվում է եռաստիճան համակարգով՝

- Ընդհանուր ժողով
- Խորհուրդ
- Գործադիր տնօրեն

**Ընդհանուր ժողովը** Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է, որի իրավասությունները սահմանված են օրենքով և Ընկերության կանոնադրությամբ:

**Խորհուրդը** իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ օրենքով և կանոնադրությամբ խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի շրջանակներում:

Խորհուրդը բաղկացած է 7 անդամից, որոնք ընտրվում են տարեկան Ընդհանուր ժողովում, իսկ Ընկերության խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ արտահերթ Ընդհանուր ժողովում Ընկերության ներկա բաժնետերերի կողմից՝ ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով: Խորհրդի նախագահին ընտրում է Խորհուրդը՝ Խորհրդի անդամների կազմից:

**Գործադիր տնօրենը** ղեկավարում է Ընկերության ընթացիկ գործունեությունը: Ընկերության գործադիր տնօրենը նշանակվում է Խորհրդի կողմից, իսկ Գործադիր տնօրենի տեղակալները՝ Խորհրդի կողմից՝ Գործադիր տնօրենի ներկայացմամբ: Ընկերության Գործադիր տնօրենը, որպես իր բացառիկ իրավասություն, ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, Ընկերության անունից կնքում է գործարքներ, գործում է Ընկերության անունից առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր, տնօրինում է Ընկերության գույքը, ֆինանսական միջոցները:

Ընկերության գլխավոր հաշվապահը նշանակվում է Խորհրդի կողմից՝ Գործադիր տնօրենի ներկայացմամբ: Գլխավոր հաշվապահին իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:

Ընկերությունում ներդրվել են նաև ներքին աուդիտի և պատասխանատու ակտուարի ինստիտուտները:

**Ծանոթագրություն 2 Հաշվապահական հաշվառման ստանդարտներ**

Ընկերությունում հաշվապահական հաշվառումը վարվում է ընդունված հաշվապահական հաշվառման քաղաքականության միջոցով, որն իրենից ներկայացնում է հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու ու ներկայացնելու կոնկրետ սկզբունքներն ու հիմունքները, կանոնները, ձևերը, կարգերը, ընթացակարգերը: Ընկերության կողմից ընդունված հաշվապահական հաշվառման քաղաքականության դրույթները հիմնված են հաշվապահական հաշվառումը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ իրավական ակտերի, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտների (ՀՀՀՀՄ) պահանջների վրա:

## **Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը և ներկայացումը**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ իրական արժեքով չափվող վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքների, ինչպես նաև շենք-շինությունների, որոնք արտացոլված են իրական արժեքով:

Տնտեսական գործառնությունները ֆինանսական հաշվետվություններում ներկայացված են հաշվեգրման սկզբունքի հիման վրա: Բացառություն կազմում է միայն դրամական միջոցների շարժի վերաբերյալ հաշվետվությունը, որը պատրաստված է «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» ՀՀՀՄ7-ի պահանջների համաձայն:

Ֆինանսական հաշվետվություններում արտացոլված մեծությունների ներկայացման արժույթ է համարվում Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը՝ դրամը: Գումարները հաշվետվություններում ներկայացված են հազար դրամներով: Արտարժույթով իրականացված գործարքները գրանցված են համարժեք դրամներով՝ փոխարկման հիմք ընդունելով համապատասխան արժույթի համար Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքը: Արտարժույթով արտահայտված ակտիվներն ու պարտավորությունները հաշվետու ամսաթվի դրությամբ վերագնահատված են՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքները հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթվի դրությամբ:

Ֆինանսական հաշվետվություններում ակտիվների և պարտավորությունների հաշվանցումները կիրառվում են հետևյալ դեպքերում՝ ակտիվների օտարումից ստացված հասույթից հանվում են ակտիվի հաշվեկշռային արժեքը և օտարման հետ կապված ծախսերը, և արդյունքը ցույց է տրվում որպես զուտ շահույթ կամ վնաս (հիմնական միջոցների օտարում, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների օտարում):

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի բերման հետ կապված վերահաշվարկումից եկամուտներն ու ծախսերը իրարից հանվում են և արդյունքն արտացոլվում է որպես շահույթ կամ վնաս:

Արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների վերագնահատման արդյունքները գրանցվում են որպես եկամուտ և ծախս:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ընկերությունը պահպանել է հետևողականության, անընդհատության, էականության և համադրելի տեղեկատվության սկզբունքները:

## **Եկամուտների և ծախսերի հիմնական տեսակների ճանաչումը**

Ընկերությունում եկամուտները և ծախսերը հաշվառված և ֆինանսական հաշվետվություններում ներկայացված են «Հասույթ» ՀՀՀՄ 18-ի պահանջների հիման վրա: Եկամուտների և ծախսերի հաշվառումը կատարված է հաշվեգրման սկզբունքով: Ընդ որում պահպանված է եկամուտների և ծախսերի ճանաչման համապատասխանությունը: Մասնավորապես, ընկերության կողմից հաշվեգրված հասույթի և այդ հասույթի ստացման հետ կապված ծախսումների հաշվեգրումը կատարված են միաժամանակ այն ժամանակաշրջանի ընթացքում, որին դրանք վերաբերվում են:

Ընկերության հիմնական եկամուտը ձևավորվում է հաշվետու տարվա ընթացքում կնքված պայմանագրերի գծով համախառն

ապահովագրավճարներից, նույնիսկ, եթե նրանք ամբողջությամբ կամ մասամբ են վերաբերվում տվյալ ժամանակաշրջանին:

Հիմնական գործունեությունից ստացվող եկամտի հիմնավորող փաստաթուղթ է համարվում ՝ թողարկված ապահովագրական վկայագիրը: Ընդ որում, եկամուտների ճանաչման ամսաթիվ է համարվում հետևյալ երկու ամսաթվերի՝ վկայագրերի թողարկման (վավերացման) և վկայագրերի գործողության սկզբի ամսաթվերից առավելագույնը:

Ապահովագրական վկայագրերի հետագա փոփոխությունները իրականացվում են ապահովագրական վկայագրերի անբաժանելի մաս կազմող հավելվածների թողարկմամբ, որոնց գծով առաջացող եկամուտները կամ ծախսերը նույնպես ճանաչվում են հավելվածների թողարկման և նրանց գործողության մեջ մտնելու ամսաթվերից առավելագույնով:

Ընկերությունը ապահովագրական պայմանագրերից բխող ապահովագրավճարների եկամուտ ճանաչմանը զուգընթաց ծախսագրում է վերապահովագրական պայմանագրերի համաձայն վերապահովագրողներին փոխանցման ենթակա ապահովագրավճարները: Միաժամանակ վերապահովագրության պայմանագրով նախատեսված կոմիսիոն վարձատրության գումարները ճանաչվում են որպես եկամուտ: Ոչ ռեզիդենտ վերապահովագրողներին հաշվեգրված վերապահովագրավճարների գծով բյուջեի նկատմամբ առաջացող ոչ ռեզիդենտի շահութահարկի պարտավորությունը ճանաչվում է վերապահովագրողին պարտքի գումարի փաստացի վճարման ժամանակ:

Համախառն ապահովագրավճարներից ստացված եկամուտը ճշգրտվում է չվաստակած եկամտի չափով՝ այսինքն ապագա ժամանակաշրջաններին վերաբերվող եկամուտը ճանաչվում է որպես ծախս հաշվետու ժամանակաշրջանում:

Այդ նպատակով ընկերությունը ձևավորում է չվաստակած ապահովագրավճարների պահուստ, որը հաշվարկվում է յուրաքանչյուր ապահովագրական պայմանագրի համար և որը մվագեցվում է ՀՀ ԿԲ կողմից սահմանված չափանիշների համապատասխան հուսալի համարվող վերապահովագրողների ապահովագրավճարների մասով:

Համաձայն ՀՀ օրենսդրության, ՀՀ ԿԲ կողմից սահմանված նորմատիվ իրավական ակտերի և ընկերության կողմից ընդունված ներքին կանոնակարգերի ընկերությունը հաշվարկում է նաև վնասների, հավասարակշռման, բոնուսների և զեղչերի ապահովագրական պահուստներ:

## Արտարժույթային փոխարժեքային տարբերությունների ճանաչման մոտեցումը

Արտարժույթով գործարքները տեղի ունենալու պահին գրանցվում են ՀՀ դրամով տվյալ արտարժույթի նկատմամբ կիրառելով ՀՀ դրամի և արտարժույթի միջև ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված գործարքի օրվա հաշվարկային փոխարժեքը:

Հաշվապահական հաշվետվությունների պատրաստման ամսաթվին արտարժույթով արտահայտված ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են ՀՀ դրամի և արտարժույթի միջև ՀՀ ԿԲ-ի կողմից տվյալ ամսաթվի համար սահմանված փոխարժեքներով:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները հաշվետվության մեջ ներկայացվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց գրանցման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում գրանցման փոխարժեքից, ճանաչվում են եկամուտ կամ ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում այն հաշվետու ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

Արտարժույթային փոխարժեքային տարբերությունները ընկերության կողմից հաշվառվել և ֆինանսական հաշվետվություններում ներկայացվել են «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները «ՀՀՀՀՍ21»-ի դրույթների հիման վրա:

2009 թ դեկտեմբերի 31-ի դրությամբ արտարժույթների փոխարժեքները հետևյալն են

Արժույթ

1 USD	377,89	դրամ
1 EUR	542,23	դրամ
1 GBP	599,79	դրամ
1 RUR	12,5	դրամ

### Շահութահարկ

Ընկերության կողմից շահութահարկի հաշվառումը և ֆինանսական հաշվետվություններում ներկայացումը կատարվում է «Շահութահարկ» ՀՀՀՀՍ12-ի դրույթների հիման վրա:

Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, որպես ծախս: Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է: Այն հաշվարկվում է կիրառելով շահութահարկի դրույթաչափը, որն ուժի մեջ է եղել կամ ըստ էության ուժի մեջ կլինի հաշվեկշռի ամսաթվի դրությամբ և նախորդ տարիների վճարման ենթակա շահութահարկի գծով կատարված ճշգրտումները:

### Ֆինանսական գործիքների ճանաչումը և չափումը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական գործիքների, մասնավորապես վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների, իրական արժեքի հիման վրա: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները ձեռք բերման պահին ճանաչվում են իրենց սկզբնական արժեքով, որն իրենից ներկայացնում է դրանց դիմաց տրված փոխհատուցման իրական արժեքը՝ ներառյալ գործարքի հետ կապված ծախսումները: Վաճառքի համար մատչելի և առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների իրական արժեքների փոփոխություններից առաջացած եկամուտը և ծախսը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որպես շահույթ կամ վնաս:

Ընկերությունը ֆինանսական ակտիվները ապաճանաչում է, երբ կորցնում է վերահսկողությունը պայմանագրային իրավունքների նկատմամբ, որոնք կազմում են այդ ակտիվը: Վերջինս տեղի է ունենում, երբ պայմանագրում սահմանված օգուտների նկատմամբ իրավունքները իրացվում են, իրավունքների ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է կամ ընկերությունը հրաժարվում է այդ իրավունքից:

Վաճառքի համար մատչելի և առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները վաճառքի ժամանակ ապաճանաչվում են և նրանց դիմաց ստացվելիք համապատասխան գումարները ճանաչվում են որպես հասույթ:

Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական գործիքները ապաճանաչվում են այն օրը, երբ փոխանցվում են ընկերության կողմից:

### Գրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Ընկերության կողմից դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ դրամական միջոցները, որոնք ներդրված կարող են լինել ՀՀ ռեզիդենտ և օտարերկրյա բանկերում:

### Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Ընկերությունում հիմնական միջոցները ներկայացված են նրանց սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության ու արժեզրկումից կորուստների տարբերությամբ:

Հիմնական միջոցների մաշվածությունը հաշվարկվում է նրանց օգտակար ծառայության ժամկետի ընթացքում կիրառելով գծային մեթոդը: Մաշվածության հաշվարկումը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման և շահագործման պահին հաջորդող ամսից: Վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը կապիտալացվում են և ամորտիզացվում նրանց օգտակար ծառայության և վարձակալության ժամկետներից նվազագույնի ընթացքում:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության սահմանված ժամկետներն են՝

Շենք-շինությունների համար	20 տարի
Համակարգչային սարքավորումների համար	1-3 տարի
Տնտեսական գույքի համար	1-5 տարի
Տրանսպորտային միջոցների համար	5 տարի
Այլ հիմնական միջոցների համար	1-5 տարի

Մինչև 50 000 դրամ դրամ արժողությամբ հիմնական միջոցների համար սահմանվում է 1 տարի նվազագույն ժամկետ:

Հիմնական միջոցների ծառայության ընթացքում հետագայում նրանց վրա կատարված ծախսումները ավելացվում են տվյալ միավորի հաշվեկշռային արժեքին, երբ դրանց շնորհիվ ակնկալվում է ավելի շատ ապագա տնտեսական օգուտների ներհոսք դեպի կազմակերպություն, քան ակտիվի սկզբնական գնահատումից: Հակառակ դեպքերում բոլոր հետագա ծախսումները ճանաչվում են որպես հաշվետու ժամանակաշրջանի ծախս:

Ընկերության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները արտացոլված են ձեռք բերման արժեքով հանած կուտակված մաշվածությունը: Ոչ նյութական ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է գծային եղանակով՝ էլնելով նրանց օգտակար ծառայության ժամկետներից, իսկ դրա անհնարինության դեպքում օգտակար ծառայության ժամկետը ընդունվում է 10 տարի: Այսպես՝

Համակարգչային ծրագրերի համար ընտրված է	1-10 տարի
Այլ ոչ նյութական ակտիվների համար՝	20 տարի:

**Ծանոթագրություն 3. Դրամական միջոցներ:**

2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերության դրամական միջոցները հետևյալն են՝	Ընթ. միջ. ժ/շրջանի վերջի դրութ.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
ա. Կանխիկ դրամական միջոցներ դրամարկղում	486	1 744
բ. Բանկային հաշիվներ ռեզիդենտ բանկերում (դրամային)	76 010	41 041
գ. Բանկային հաշիվներ ռեզիդենտ բանկերում (արժութային)	2 471	6 678
<b>Ը ն դ ա մ ե ն ը</b>	<b>78 967</b>	<b>49 463</b>

**Ծանոթագրություն 4. Ապահովագրության գծով ստացվելիք գումարներ:**

2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերության ապահովագրության գծով ստացման ենթակա գումարները հետևյալն են՝	Ընթ. միջ. ժ/շրջանի վերջի դրութ.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
ա. Ստացվելիք գումարներ ռեզիդենտ ապահովագրողներից (ապահովադիրներից)	132 036	115 885
բ. Ստացվելիք գումարներ ոչ ռեզիդենտ ապահովագրողներից (ապահովադիրներից) (դրամ)	3 494	1 495
գ. Ստացվելիք գումարներ ոչ ռեզիդենտ ապահովագրողներից (ապահովադիրներից) (արտարժույթ)	274	87 516
դ. Ստացվելիք գումարներ վերաապահովագրության ընդունած ռիսկերի գծով (արտարժույթ)		577
ե. Հատուցումների գծով պահանջներ ոչ ռեզիդենտ վերաապահովագրողների նկատմամբ	9 449	91 066
զ. Մուրրոզացիայի հետևանքով առաջացած պահանջներ ռեզիդենտների նկատմամբ	20 393	605
է. Ապահովագրական պայմանագրերի գծով ոչ ռեզիդենտներից ստացվելիք այլ գումարներ		1 212
ը. Ուղղակի ապահովագրության պայմանագրերի գծով ստացվելիք գումարների հնարավոր կորուստների պահուստ	(5 826)	(10 986)
թ. Վերաապահովագրության պայմանագրերի գծով ստացվելիք գումարների հնարավոր կորուստների պահուստ	(707)	(1 368)
ժ. Ստացվելիք այլ գումարներ ոչ ռեզիդենտ վերաապահովագրողներից		1 203
<b>Ը ն դ ա մ ե ն ը</b>	<b>159 113</b>	<b>287 205</b>

**Ծանոթագրություն 5. Ընթացիկ ավանդներ :**

Ընկերության ընթացիկ ավանդները 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են՝	Ընթ. միջ. ժ/շրջանի վերջի դրութ.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
ա. Ավանդներ ռեզիդենտ բանկերում (դրամային)	68 147	419 000
բ. Ավանդներ ռեզիդենտ բանկերում (արժութային)	725 227	50 610
<b>Ը ն դ ա մ ե ն ը</b>	<b>793 374</b>	<b>469 610</b>

**Ծանոթագրություն 6. Ընթացիկ փոխառություններ:**

Ընթացիկ փոխառությունները 2009թ դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են՝

	Ընթ. միջ. ժ/շրջանի վերջի դրուք.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
ա. Ռեզիդենտ ֆիզիկական անձանց տրամադրված ընթացիկ փոխառություններ		200
<b>Ը ն դ ա մ ե ն ը</b>		<b>200</b>

**Ծանոթագրություն 8. Վաճառքի համար մատչելի ընթացիկ արժեթղթեր**

	Ընթ. միջ. ժ/շրջանի վերջի դրուք.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
ա. ՀՀ պետական առանց տոկոսի արժեթղթեր	47 595	
<b>Ը ն դ ա մ ե ն ը</b>	<b>47 595</b>	<b>0</b>

**Ծանոթագրություն 10. Գեբիտորական պարտքեր և կանխավճարներ**

	Ընթ. միջ. ժ/շրջանի վերջի դրուք.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
ա. Կանխավճարներ ռեզիդենտ մատակարարներին	6 147	6 969
բ. Կանխավճարներ ոչ ռեզիդենտ մատակարարներին	612	488
գ. Այլ կանխավճարված հարկեր, տուրքեր	303	68
դ. Այլ դեբիտորական պարտքերի գումարների հնարավոր կորուստների պահուստ	(320)	
<b>Ը ն դ ա մ ե ն ը</b>	<b>6 742</b>	<b>7 525</b>

**Ծանոթագրություն 11. Ստացվելիք տոկոսներ:**

Ընկերության կողմից ներդրումների գծով հաշվեգրված և ստացման ենթակա տոկոսները 2009թ դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են

	Ընթ. միջ. ժ/շրջանի վերջի դրուք.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
ա. Ռեզիդենտ բանկերում ներդրված ավանդների գծով (դրամային)	1 954	10 573
բ. Ռեզիդենտ բանկերում ներդրված ավանդների գծով (արժութային)	20 740	981
<b>Ը ն դ ա մ ե ն ը</b>	<b>22 694</b>	<b>11 554</b>

**Ծանոթագրություն 10. Այլ ընթացիկ ակտիվներ**

Ընթացիկ այլ ակտիվները 2009թ դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն են

	Ընթ. միջ. ժ/շրջանի վերջի դրուք.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
ա. Այլ ընթացիկ ակտիվներ	283	398
բ. Ստացվելիք այլ գումարներ ռեզիդենտներից	72	
գ. Ստացվելիք այլ գումարներ ոչ ռեզիդենտներից	1309	
<b>Ը ն դ ա մ ե ն ը</b>	<b>1 664</b>	<b>398</b>

**Ծանոթագրություն 13. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ**

**ա. Հիմնական միջոցներ**

	Շենքեր	Համակարգչային և կապի միջոցներ	Փոխադրա միջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Հիմն.միջոց.գ.գծով կապիտալներդ.	Վարձ. հիմն. միջոց. գծով կապիտալներդ.	Ընդամենը
Սկզբնական արժեք	---	---	---	---	---	---	---
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	71 500	7 029	15 917	8 520			102 966

Ավելացում		6 097	2 319	13 645			22 061
Օտարում		(1 377)		(4 364)			(5 741)
Արժեզրկում							0
Վերագնահատում							-
<b>Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին</b>	<b>71 500</b>	<b>11 749</b>	<b>18 236</b>	<b>17 801</b>			<b>119 286</b>
Ավելացում		949	1 111	3 439			5 499
Օտարում		(82)					(82)
Վերագնահատում*	2 984						2 984
Արժեզրկում							0
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում	(7 484)						(7 484)
<b>Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին</b>	<b>67 000</b>	<b>12 616</b>	<b>19 347</b>	<b>21 240</b>			<b>120 203</b>
Կուտակված մաշվածություն	---	---	---	---	---	---	---
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	215	4 609	4 447	6 915			16 186
Ավելացում	3 576	5 043	3 147	2 477			14 243
Օտարում		(1 335)		(4 239)			(5 574)
Արժեզրկում							0
Վերագնահատում							-
<b>Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին</b>	<b>3 791</b>	<b>8 317</b>	<b>7 594</b>	<b>5 153</b>			<b>24 855</b>
Ավելացում	3 694	3 351	3 072	4 062			14 179
Օտարում		(82)					(82)
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում	(7 485)						(7 485)
Արժեզրկում							-
<b>Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին</b>	<b>-</b>	<b>11 586</b>	<b>10 666</b>	<b>9 215</b>			<b>31 467</b>
Ջուտ հաշվեկշռային արժեք	---	---	---	---	---	---	---
Հաշվետու ժամանակաշրջանի վերջին	67 000	1 030	8 681	12 025			88 736
Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջին	67 709	3 432	10 642	12 648			94 431

բ. Ոչ նյութական ակտիվներ

	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ և վստահագրեր	Հեղինակային իրավունքներ	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ոչ նյութական ակտիվ. գծով կապիտալ ներդ.	Ընդամենը
Սկզբնական արժեք	---	---	---	---	---	---
<b>Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին</b>	<b>3 162</b>			<b>199 903</b>		<b>203 065</b>
Ավելացում	150					150
Օտարում						-
Արժեզրկում						-
Վերագնահատում						-
<b>Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին</b>	<b>3 312</b>			<b>199 903</b>		<b>203 215</b>
Ավելացում	460				5 000	5 460
Օտարում						-
Վերագնահատում *						-
Արժեզրկում						-
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում						-
<b>Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին</b>	<b>3 772</b>			<b>199 903</b>	<b>5 000</b>	<b>208 675</b>
Կուտակված մաշվածություն	---	---	---	---	---	---

<b>Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին</b>	<b>158</b>			<b>76 780</b>		<b>76 938</b>
Ավելացում	1 664			9 995		11 659
Օտարում						-
Արժեզրկում						-
Վերագնահատում						-
<b>Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին</b>	<b>1 822</b>			<b>86 775</b>		<b>88 597</b>
Ավելացում	1 416			9 995		11 411
Օտարում						-
Վերագնահատում միջ մաշվածության ճշգրտում						-
Արժեզրկում						-
<b>Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին</b>	<b>3 238</b>			<b>96 770</b>		<b>100 008</b>
<b>Չուտ հաշվեկշռային արժեք</b>	<b>---</b>	<b>---</b>	<b>---</b>	<b>---</b>	<b>---</b>	<b>---</b>
<b>Հաշվետու ժամանակաշրջանի վերջին</b>	<b>534</b>			<b>103 133</b>	<b>5 000</b>	<b>108 667</b>
<b>Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջին</b>	<b>1 490</b>			<b>113 128</b>		<b>114 618</b>

\* Հիմնական միջոցների կազմում ներառված «Շենքեր» բաժնում արտացոլված միավորները ներկայացված են շուկայական արժեքով: Այդ արժեքը որոշված է մասնագիտական որակավորում ունեցող «Ա.Գ. Բուրսա» ՍՊԸ գնահատող կազմակերպության կողմից 24/12/2009թ տրված գնահատման ակտի հիման վրա: Գնահատման արդյունքների հաշվապահական գրանցումը կատարված է Հիմնական միջոցներ ՀՀՀՄ16-ի 32 կետի բ. ենթակետի համաձայն, այսինքն՝ գնահատման պահին կուտակված մաշվածությունը հանված է ակտիվի սկզբնական արժեքից և գուտ գումարը վերաձևակերպված է գնահատման արժեքի հիման վրա: Շենքերի վերագնահատումից աճը՝ **2 984,0** հազար դրամի չափով վերագրվել է սեփական կապիտալի տարրին՝ վերագնահատման պահուստին:

**Ծանոթագրություն 14. Ոչ ընթացիկ ավանդներ:**

Ընկերության ոչ ընթացիկ ավանդները 2009թ դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են՝

	Ընթ. միջ. ժ/շրջանի վերջի դրությ.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
ա. Ռեզիդենտ բանկերում ներդրված ավանդներ (դրամային)	66 000	395 000
բ. Ռեզիդենտ բանկերում ներդրված ավանդներ (արժուրային)	486 636	
<b>Ը ն դ ա մ ե ն ը</b>	<b>552 636</b>	<b>395 000</b>

**Ծանոթագրություն 16. Վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ արժեթղթեր:**

	Ընթ. միջ. ժ/շրջանի վերջի դրությ.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
ա. ՀՀ պետական արժեթղթեր	87 222	351 016
բ. ՀՀ ոչ պետական արժեթղթեր	104 400	178 600
գ. Այլ փայամասնակցություններ	41 438	26 673
<b>Ը ն դ ա մ ե ն ը</b>	<b>233 060</b>	<b>556 289</b>

**Ծանոթագրություն 19. Ստացվելիք տոկոսներ:**

	Ընթ. միջ. ժ/շրջանի վերջի դրությ.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
ա. Ռեզիդենտ բանկերում ներդրված ոչ ընթացիկ ավանդների գծով	7 463	11 575
բ. ՀՀ պետական արժեթղթերի գծով	2 139	12 451
գ. ՀՀ ոչ պետական արժեթղթերի գծով	2 560	5 177
<b>Ը ն դ ա մ ե ն ը</b>	<b>12 162</b>	<b>29 203</b>

**Ծանոթագրություն 22. Ապահովագրության գծով վճարելիք գումարներ:**

Ընկերության ապահովագրության ածով մճառվելիք գումարները 2009թ. դեկտեմբերի 31-ի

Ընթ. միջ.	Նախորդ տարվա
-----------	--------------

Պրոյեկտի նկարագրումը	Ժ/ըջանի վերջի դրութ.	վերջի դրությամբ
ա. Ռեզիդենտ ապահովագրվողներին (ապահովադիրներին) վճարվելիք հատուցումներ	732	22 306
բ. Ոչ ռեզիդենտ ապահովագրվողներին (ապահովադիրներին) վճարվելիք հատուցումներ	200	520
գ. Ռեզիդենտ միջնորդներին վճարվելիք գումարներ	4 759	36 637
դ. Ռեզիդենտ ապահովագրվողներին (ապահովադիրներին) հետ վերադարձվող ապահովագրավճարներ	1 166	1 686
ե. Ոչ ռեզիդենտ ապահովագրվողներին (ապահովադիրներին) հետ վերադարձվող ապահովագրավճարներ		335
<b>Ը ն դ ա մ ե ն ը</b>	<b>6 857</b>	<b>61 484</b>

**Ծանոթագրություն 23. Ապահովագրության գծով փոխանցվելիք ապահովագրավճարներ:**

2009թ ղեկտեմբերի 31-ի դրությամբ ապահովագրության գծով փոխանցվելիք ապահովագրավճարների գումարն է՝	Ընթ. միջ. ժ/ըջանի վերջի դրութ.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
ա. Ոչ ռեզիդենտ վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարներ (դրամային)	84 656	177 498
բ. Ոչ ռեզիդենտ վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարներ (արտարժույթային)	15 156	104 194
<b>Ը ն դ ա մ ե ն ը</b>	<b>99 812</b>	<b>281 692</b>

**Ծանոթագրություն 24. Ընթացիկ փոխառություններ:**

2009թ ղեկտեմբերի 31-ի դրությամբ ընթացիկ փոխառությունների գումարն է՝	Ընթ. միջ. ժ/ըջանի վերջի դրութ.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
ա. Ռեզիդենտ բանկերից ստացված վարկեր		40 000
<b>Ը ն դ ա մ ե ն ը</b>	<b>0</b>	<b>40 000</b>

**Ծանոթագրություն 26. Չվաստակած ապահովագրավճարների պահուստ:**

Ընկերության չվաստակած ապահովագրավճարների պահուստի մեծությունը 2009թ ղեկտեմբերի 31-ին կազմել է՝	Ընթ. միջ. ժ/ըջանի վերջի դրութ.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
ա. Ռեզիդենտների գծով	254 886	338 720
բ. Ոչ ռեզիդենտների գծով	45 990	10 324
<b>Ը ն դ ա մ ե ն ը</b>	<b>300 876</b>	<b>349 044</b>

**Ծանոթագրություն 27. Պահանջների (վնասների) պահուստ:**

Ընկերության պահանջների պահուստի մեծությունը 2009թ ղեկտեմբերի 31-ին կազմել է՝	Ընթ. միջ. ժ/ըջանի վերջի դրութ.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
ա. Ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստ ռեզիդենտն. գծով	31 995	19 617
բ. Ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստ ոչ ռեզիդենտն. գծով	1 765	2 260
գ. Տեղի ունեցած, սակայն դեռևս չներկայացված պահանջների պահուստ ռեզիդենտների գծով	54 534	50 623
<b>Ը ն դ ա մ ե ն ը</b>	<b>88 294</b>	<b>72 500</b>

**Ծանոթագրություն 29. Այլ ապահովագրական պահուստներ:**

Այլ ապահովագրական պահուստներ տողում ներառված են՝	Ընթ. միջ. ժ/ըջանի վերջի դրութ.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
ա. Հավասարակշռման պահուստ	8 734	13 742
բ. Չեղչերի պահուստ	4 338	1 901
<b>Ը ն դ ա մ ե ն ը</b>	<b>13 072</b>	<b>15 643</b>



**Ծանոթագրություն 30. Այլ վճարվելիք գումարներ:**

2009թ դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերության այլ վճարվելիք գումարները հետևյալն են՝

	Ընթ. միջ. ժ/շրջանի վերջի դրուք.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
ա. Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով	19 931	32 518
բ. Կրեդիտորական պարտքեր այլ հարկերի գծով	2 693	836
գ. Կրեդիտորական պարտքեր հիմնական աշխատողներին այլ գործառնությունների գծով	740	
դ. Արտաքին կրեդիտորական պարտքեր ռեզիդենտների նկատմամբ	3 168	469
ե. Արտաքին կրեդիտորական պարտքեր ոչ ռեզիդենտների նկատմամբ	1 082	2 714
<b>Ը ն դ ա մ ե ն ը</b>	<b>27 614</b>	<b>36 537</b>

**Ծանոթագրություն 31. Այլ ընթացիկ պարտավորություններ:**

2009թ դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերության այլ ընթացիկ պարտավորություններն են՝

	Ընթ. միջ. ժ/շրջանի վերջի դրուք.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
ա. Ստացված կանխավճարներ ապահովագրության գծով	46 715	81 892
բ. Ընթացիկ պարտավորություններ գործառնական վարձակալության գծով		1 450
գ. Ընթացիկ պահուստներ չօգտագործված արձակուրդների համար	9 248	
դ. Այլ ընթացիկ պարտավորություններ ռեզիդենտների նկատմամբ	8 769	24 921
<b>Ը ն դ ա մ ե ն ը</b>	<b>64 732</b>	<b>108 263</b>

**Ծանոթագրություն 37. Կանոնադրական կապիտալ:**

2009թ դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է

Ընթ. միջ. ժ/շրջանի վերջի դրուք.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
<b>750 878</b>	<b>750 878</b>

**Ծանոթագրություն 39. Գլխավոր պահուստ**

2009թ դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերության գլխավոր պահուստը կազմում է

Ընթ. միջ. ժ/շրջանի վերջի դրուք.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
<b>28 138</b>	<b>15 750</b>

Գլխավոր պահուստի ավելացումը չբաշխված շահույթի հաշվին **12 388,0** հազար դրամի չափով կատարվել է բաժնետերերի տարեկան ժողովի որոշման հիման վրա:

**Ծանոթագրություն 40. Վերագնահատման պահուստներ:**

Ընկերության 2009թ դեկտեմբերի 31-ի դրությամբ վերագնահատման պահուստը իրենից ներկայացնում է՝

Ընթ. միջ. ժ/շրջանի վերջի դրուք.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
<b>38 933</b>	<b>35 949</b>

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ

Վերագնահատման պահուստի ավելացումը **2 984,0** հազար դրամի չափով կատարվել է հաշվեկշռում առկա շենքերի վերագնահատման արդյունքում:

**Ծանոթագրություն 41. Չբաշխված շահույթ (վնաս):**

ընկերության 2009թ դեկտեմբերի 31-ի դրությամբ չբաշխված շահույթը կազմել է

Ընթ. միջ. ժ/շրջանի վերջի դրուք.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
<b>687 844</b>	<b>247 757</b>

Չբաշխված շահույթի ավելացումը **450720,0** հազար դրամի չափով կատարվել է հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքի հաշվին, իսկ նվազեցումը՝ **12 388,0** հազար դրամի չափով գլխավոր պահուստին մասհանման հետևանքով:

**Ծանոթագրություն 43. Եկամուտներ ապահովագրավճարներից:**

	Ընթ. միջ. ժ/շրջանի վերջի դրուք.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
ա. Ոչ կյանքի ապահովագրության գծով ռեզիդենտ ապահովադիրներից ստացվելիք ապահովագրավճարների գծով եկամուտներ	1 536 949	1 745 288
բ. Ոչ կյանքի ապահովագրության գծով ոչ ռեզիդենտ ապահովադիրներից ստացվելիք		

ապահովագրավճարների գծով եկամուտներ	120 041	201 885
գ. Ստացվելիք վերապահովագրավճարների գծով եկամուտներ ռեզիդենտ վերապահովագրողներից	50	
գ. Ստացվելիք վերապահովագրավճարների գծով եկամուտներ ոչ ռեզիդենտ վերապահովագրողներից	1 127	1 134
<b>Ը ն դ ա մ ե ն ը</b>	<b>1 658 167</b>	<b>1 948 307</b>

**Ծանոթագրություն 44. Եկամուտներ միջնորդավճարներից:**

	Ընթ. միջ. ժ/շրջանի վերջի դրուք.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
Ոչ ռեզիդենտ վերապահովագրողներից ստացվելիք միջնորդավճարների գծով եկամուտներ	76 213	130 461

**Ծանոթագրություն 46. Եկամուտներ վերապահովագրողներից ստացվելիք հատուցումներից:**

	Ընթ. միջ. ժ/շրջանի վերջի դրուք.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
Ոչ կյանքի ապահովագրության գծով ոչ ռեզիդենտ վերապահովագրողներից ստացվելիք հատուցումների գծով եկամուտներ	253 607	302 346

**Ծանոթագրություն 47. Եկամուտներ սուբրոգացիայից**

	Ընթ. միջ. ժ/շրջանի վերջի դրուք.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
Ոչ կյանքի ապահովագրության գծով սուբրոգացիայի հետևանքով ռեզիդենտների նկատմամբ առաջացած պահանջներից եկամուտներ	31 924	1 602

**Ծանոթագրություն 48. Այլ եկամուտներ**

	Ընթ. միջ. ժ/շրջանի վերջի դրուք.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
ա. Եկամուտներ ոչ ռեզիդենտ վերապահովագրողներից՝ դադարեցված պայմանագրերի գծով վերադարձման ենթակա վերապահովագրավճարների գծով	7 398	35 064
բ. Ոչ կյանքի ապահովագրության գծով այլ եկամուտներ ոչ ռեզիդենտներից	1 875	
<b>Ը ն դ ա մ ե ն ը</b>	<b>9 273</b>	<b>35 064</b>

**Եկամուտներ ապահովագրական պահուստների հակադարձումից և դրանց նվազեցումից**

	Ընթ. միջ. ժ/շրջանի վերջի դրուք.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
<b>Ծանոթագրություն 55. Եկամուտներ չվաստակած ապահովագրավճարների պահուստի հակադարձումից</b>	<b>4 003 120</b>	<b>4 417 518</b>
<b>Ծանոթագրություն 56. Եկամուտներ պահանջների (վնասների) պահուստի հակադարձումից</b>	<b>378 289</b>	<b>209 696</b>
<b>Ծանոթագրություն 58. Եկամուտներ ապահովագրական այլ պահուստների հակադարձումից</b>	<b>59 540</b>	<b>6 903</b>
<b>Ծանոթագրություն 59. Եկամուտներ չվաստակած ապահովագրավճարների պահուստից վերապահովագրողի բաժնի նվազեցման չափով</b>	<b>3 679 615</b>	<b>4 486 817</b>
<b>Ծանոթագրություն 60. Եկամուտներ պահանջների (վնասի) պահուստից վերապահովագրողի բաժնի նվազեցման գծով</b>	<b>1 358 784</b>	<b>694 702</b>
<b>Ը ն դ ա մ ե ն ը</b>	<b>9 479 348</b>	<b>9 815 636</b>

Ծախսեր ոչ կյանքի ապահովագրության գծով:

**Ծանոթագրություն 63. հատուցումներ ուղղակի ապահովագրական պայմանագրերի գծով**

Ընթ. միջ. ժ/շրջանի վերջի դրուք.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
---------------------------------	------------------------------

ա. Ռեզիդենտ ապահովագրվողներին (ապահովադիրներին) վճարվելիք հատուցումների գծով	441 884	449 529
բ. Ոչ ռեզիդենտ ապահովագրվողներին (ապահովադիրներին) վճարվելիք հատուցումների գծով	21 506	12 417
<b>Ը ն դ ա մ ե ն ը</b>	<b>463 390</b>	<b>461 946</b>

<b>Ծանոթագրություն</b>	<b>65 Վերապահովագրությանը ընդունած ռիսկերի գծով վճարվելիք հատուցումներ ոչ ռեզիդենտներին</b>	Ընթ. միջ. ժ/ըջանի վերջի դրուք.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
		<b>621</b>	

<b>Ծանոթագրություն</b>	<b>66. ապահովագրական միջնորդների գծով</b>	Ընթ. միջ. ժ/ըջանի վերջի դրուք.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
Ոչ կյանքի ապահովագրության պայմանագրերի գծով ռեզիդենտ ապահովագրական միջնորդներին վճարվելիք գումարների գծով ծախսեր		<b>250 436</b>	<b>276 368</b>

<b>Ծանոթագրություն</b>	<b>67. վերապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարների գծով</b>	Ընթ. միջ. ժ/ըջանի վերջի դրուք.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
Ոչ ռեզիդենտ վերապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարների գծով ծախսեր		<b>775 647</b>	<b>996 252</b>

<b>Ծանոթագրություն</b>	<b>68. Այլ ծախսեր</b>	Ընթ. միջ. ժ/ըջանի վերջի դրուք.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
ա. ռեզիդենտ ապահովադիրներին հետ վերադարձվող ապահովագրավճարներ լուծված պայմանագրերի գծով		22 408	75 003
բ. ռեզիդենտ ծախս		2 794	387
գ. կարգավորման ծախս		5 458	3 200
դ. այլ ոչ ռեզիդենտներին վճարվելիք այլ գումարների գծով ծախսեր		2 686	
<b>Ը ն դ ա մ ե ն ը</b>		<b>33 346</b>	<b>78 590</b>

<b>Ծախսեր ապահովագրական պահուստների ձևավորման գծով</b>		Ընթ. միջ. ժ/ըջանի վերջի դրուք.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
<b>Ծանոթագրություն</b>	<b>75. Ծախսեր չվաստակած ապահովագրավճարների պահուստի ձևավորման գծով:</b>		
		7 634 567	8 966 279
<b>Ծանոթագրություն</b>	<b>76. Ծախսեր պահանջների (վնասների) պահուստի ձևավորման գծով</b>		
		1 752 868	919 003
<b>Ծանոթագրություն</b>	<b>78. Ծախսեր այլ ապահովագրական պահուստների ձևավորման գծով</b>		
		56 969	21 109
<b>Ը ն դ ա մ ե ն ը</b>		<b>9 444 404</b>	<b>9 906 391</b>

<b>Ծանոթագրություն</b>	<b>79. Տոկոսային եկամուտներ ավանդների և փոխառությունների գծով</b>	Ընթ. միջ. ժ/ըջանի վերջի դրուք.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
ա. Տոկոսային եկամուտներ ռեզիդենտ բանկերում ներդրված ավանդների գծով		73 637	54 936
բ. Տոկոսային եկամուտներ ՀՀ պետական արժեթղթերից		20 869	24 082
գ. Տոկոսային եկամուտներ ՀՀ ոչ պետական արժեթղթերից		11 880	10 381
դ. Տոկոսային եկամուտներ ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթերից			493
ե. Դիվիդենդներ այլ երկրների ոչ պետական արժեթղթերից		1 036	1 498
զ. Այլ տոկոսային եկամուտներ		1	
<b>Ը ն դ ա մ ե ն ը</b>		<b>107 423</b>	<b>91 390</b>

<b>Ծանոթագրություն</b>	<b>80 Տոկոսային ծախսեր փոխառությունների գծով</b>	Ընթ. միջ.	Նախորդ տարվա
------------------------	--	-----------	--------------

	Ժ/շրջանի վերջի դրույթ.	վերջի դրությամբ
Տոկոսային ծախսեր վարկերի գծով	745	153
<b>Ը ն դ ա մ ե ն ը</b>	<b>745</b>	<b>153</b>

**Ծանոթագրություն 84. Վաճառքի համար մատչելի արժեթղթերից զուտ շահույթ/վնաս:**

	Ընթ. միջ. Ժ/շրջանի վերջի դրույթ.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
ա. Ֆինանսական ակտիվների վերահաշվակումից եկամուտներ	79 140	28 693
բ. Ֆինանսական ակտիվների վերահաշվակումից ծախսեր	(87 349)	(45 259)
<b>Ը ն դ ա մ ե ն ը</b>	<b>(8 209)</b>	<b>(16 566)</b>

**Ծանոթագրություն 87. Այլ եկամուտներ:**

	Ընթ. միջ. Ժ/շրջանի վերջի դրույթ.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
ա. Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից եկամուտներ	357 344	54 802
բ. Արենդավճար տարածքի վարձակալության համար	2 000	
գ. Այլ եկամուտ	9 257	11 388
<b>Ը ն դ ա մ ե ն ը</b>	<b>368 601</b>	<b>66 190</b>

**Ծանոթագրություն 88. Ակտիվների հնարավոր կորուստներին կատարվող զուտ հատկացումներ:**

	Ընթ. միջ. Ժ/շրջանի վերջի դրույթ.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
ա. Ուղղակի ապահովագրության գծով ստացվելիք գումարների հնարավոր կորուստների պահուստին հատկացումներ	(172 489)	(87 728)
բ. Ավանդների և փոխառությունների հնարավոր կորուստների (անհավաքագրելիության) պահուստին հատկացումներ	(30 579)	(71 312)
գ. Վերապահովագրության գծով ստացվելիք գումարների հնարավոր կորուստների պահուստին հատկացումներ		(9 955)
դ. Այլ անձանց նկատմամբ պահանջների հնարավոր կորուստների պահուստին հատկացումներ	(1 144)	(1 078)
ե. Բանկային և այլ հաշիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված հատկացումներ	(1 347)	
զ. Ուղղակի ապահովագրության գծով ստացվելիք գումարների հնարավոր կորուստների պահուստին կատարված հատկացումների հակադարձումից եկամուտներ	159 869	74 004
է. Ավանդների և փոխառությունների հնարավոր կորուստների պահուստին կատարված հատկացումների հակադարձումից եկամուտներ	36 529	59 068
ը. Վերապահովագրության գծով ստացվելիք գումարների հնարավոր կորուստների պահուստին կատարված հատկացումների հակադարձումից եկամուտներ		8 588
թ. Բանկային և այլ հաշիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված հատկացումներից եկամուտներ	1 347	
ժ. Այլ անձանց նկատմամբ պահանջների հնարավոր կորուստների պահուստին կատարված հատկացումների հակադարձումից եկամուտներ	824	1 078
<b>Ը ն դ ա մ ե ն ը</b>	<b>(6 990)</b>	<b>(27 335)</b>

**Ծանոթագրություն 89. Ընդհանուր վարչական ծախսեր:**

	Ընթ. միջ. Ժ/շրջանի վերջի դրույթ.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
ա. Ծախսեր անձնակազմի գծով	100 437	82 738
բ. Պարգևատրումներ և լրավճարներ	24 914	
գ. Հատկացումներ պարտադիր սոց. ապահովագրության գծով	7 930	6 497
դ. Շենքի, սարքավորումների, փոխադրամիջոցների սպասարկման և պահպանման ծախսեր	6 317	10 095
ե. Համակարգերի սպասարկման ծախսեր	2 941	2 613
զ. Կապի և հաղորդակցության գծով ծախսեր	3 644	4 659
է. Բանկային իրավաբանական, ինֆորմացիոն և աուդիտորական ծախսեր	5 154	3 841

ը. Գործուղման ծախսեր	6 565	3 025
թ. Գրասենյակային և կոմունալ ծախսեր	9 169	12 870
ժ. Տարածքի վարձակալության ծախսեր	17 400	15 750
ի. Չփոխհատուցվող հարկեր, տուրքեր	8 706	5 725
լ. Անձնակազմի ուսուցման ծախսեր	1 876	2 327
խ. Անվտանգության ապահովման ծախսեր	45	
ծ. Այլ ծախսեր	24 256	2 291
կ. Չօգտագործված արձակուրդների պահուստաֆոնդին հատկացումներ	9 248	
<b>Ը ն դ ա մ ե ն ը</b>	<b>228 602</b>	<b>152 431</b>

**Ծանոթագրություն 90. Այլ ծախսեր:**

	Ընթ. միջ. ժ/շրջանի վերջի դրությ.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
ա. Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից ծախսեր	180 714	88 527
բ. Հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսեր	11 465	14 243

զ. Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր	11 411	11 659
դ. Անհատույց տրամադրված ակտիվներ	3 982	1 152
ե. Անդամավճարներ	1 430	935
զ. Տույժ տուգանք	7 195	2 505
է. Ֆինանսական ակտիվների գծով սպասարկման և այլ ծախսեր	10 934	3 095
ը. Գովազդի ծախսեր	8 861	28 323
թ. Ներկայացուցչական ծախսեր	1 786	1 392
ժ. Այլ ծախսեր	5 142	1 861
<b>Ը ն դ ա մ ե ն ը</b>	<b>242 920</b>	<b>153 692</b>

**Ծանոթագրություն 91. Շահութահարկի գծով ծախս:**

	Ընթ. միջ. ժ/շրջանի վերջի դրությ.	Նախորդ տարվա վերջի դրությամբ
ա. 2009թ դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերության հաշվապահական շահույթը կազմել է՝	529 246	321 272
բ. ՀՀ «Շահութահարկի մասին» օրենքի դրույթների համաձայն հարկվող շահույթին՝ ավելացվող եկամուտը կազմել է՝	295 251	141 158
նվազեցումը կազմել է՝	(440 643)	(94 855)
Ընդամենը շահութահարկով հարկման նպատակով հաշվապահական շահույթին ավելացվող (շահույթից նվազեցվող) գումարը կազմել է՝	(145 392)	46 303
Շահութահարկով հարկման բազան կազմել է՝	383 854	367 575
<b>գ. Ընթացիկ հարկի գծով ծախս (վոլյսհատուցում) 20%</b>	<b>76 771</b>	<b>73 515</b>
<b>2009թ. տարեկան արդյունքներով ընկերության գուտ շահույթը կազմում է՝</b>	<b>452 475</b>	<b>247 757</b>

**Ծանոթագրություն 92. Արտահաշվեկշռային հաշիվներ:**

Ցուցանիշի անվանումը	Նախորդ տարվա վերջի մնացորդը	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջի մնացորդը
1	2	3
Գործառնական վարձակալությամբ ընդունված հիմնական միջոցներ	54 816	54 816
Որպես գրավ պահվող ակտիվներ		
Պայմանական պարտավորություններ		
Պայմանական ակտիվներ		
Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված դեբիտորական պարտքեր	21 646	34 288
Հարկային հաշվառման նպատակներով դուրս գրված կրեդիտորական պարտքեր		
Չհատուցված հարկային վնաս		
Գրավադրված ակտիվներ		
Խիստ հաշվառման բլանկներ		
Պարբերական և մասնագիտական գրականություն		
Շահագործման մեջ գտնվող փոքրարժեք հիմնական միջոցներ և արագամաշ առարկաներ		
Ոչ կյանքի ապահովագրության պայմանագրերի գծով ապահովագրական գումարներ	676 382 237	819 086 258
Կյանքի ապահովագրության պայմանագրերի գծով ապահովագրական գումարներ		

Ապահովագրական ընկերության գործադիր տնօրեն՝

Լ. Ա լ թ ո ն յ ա ն

